

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՐԿԱԴՂԻՐ ԿԱՏԱՐՈՒԽՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
Կենտրոն ,Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժին**

ք. Երևան, 0078, Հայաբլան 41ա, հեռ. 060570468

**ՈՐՈՇՈՒՄ**

**Կատարողական վարույթը կասեցնելու մասին**

**«27» սեպտեմբեր 2021թ.**

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Կենտրոն, Նորք-Մարաշ - Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի Ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Գ. Առուստամովն ուսումնասիրելով թիվ 04760459, 04760453 և 04760461 կատարողական վարույթների նյութերը

**ՊԱՐԶԵՑԻ**

Եր-ան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «04» մարտ 2020թ. տրված թիվ ԵՂ/23837/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Ա/Զ-Բաբկեն Ռաֆիկի Բարսեղյանից, Արփիկ Սերոբյանից և Լիանա Հովակիմյանից համապարտության կարգով հոգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 4.861.576 ՀՀ դրամ - կատարողական թերթով նախատեսված տոկոսները:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ պարտապան Բաբկեն Ռաֆիկի Բարսեղյանը մահացել է, իսկ իրավահաջորդ է ճանաչվել Ռաֆֆի Բաբկենի Բարսեղյանը:

Պահանջատիրոջ գրության հիման վրա պարզ է դարձել, որ 29.09.2021թ. դրությամբ պարտավորության չափը կազմում է 13.120.277 ՀՀ դրամ:

Փորձագետի կողմից գնահատվել է ՀՀ Արարատի մարզի Նորաշեն համայնքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների թիվ 24072015-03-0028 վկայականով հողամասը շուկայական արժեքը կազմում է 160.000 ՀՀ դրամ, իսկ նույն հասցեում գտնվող թիվ 24072015-030026 վկայականով հողամասը շուկայական արժեքը կազմում է 4.000.000 ՀՀ դրամ:

**Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28, 28,1 և 37.8 հոդվածներով**

**ՈՐՈՇԵՑԻ**

1. թիվ 04760459, 04760453 և 04760461 կատարողական վարույթները կասեցնել 90-օրյա ժամկետով:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ավագ հարկադիր կատարող արդարադատության կապիտան՝ Գ. Առուստամով



ստորագրություն՝ \_\_\_\_\_